



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԲՈՅԱԶՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգաղ թիվ 38003/04)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

22 Մարտի 2011թ.

ՎԵՐՋՆԱԿԱՆ

22/06/2011

Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Բոյաջյանն ընդդեմ Հայաստանի **գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը՝ հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*

Alvina Gyulumyan,

Egbert Myjer,

Ineta Ziemele,

Luis López Guerra,

Mihai Poalelungi,

Kristina Pardalos, *դատավորներ*

և Santiago Quesada, *Բաժանմունքի քարտուղար*

2011 թվականի փետրվարի 15-ին կայացած դռնփակ նիստում, կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2004 թվականի հոկտեմբերի 8-ին՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի տկն. Ռոզա Բոյաջյանի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված գանգատի (թիվ 38003/04) հիման վրա:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. 2006 թվականի սեպտեմբերի 19-ին Երրորդ բաժանմունքի նախագահը գանգատն ուղարկել է Կառավարություն: Նաև որոշվել է իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն (29-րդ հոդվածի 1-ին կետ):

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

4. Դիմումատուն ծնվել է 1935 թվականին և ապրում է Երևանում:

5. Սկսած 1971 թվականից՝ դիմումատուն խորհրդային ռուբլով տարբեր ավանդներ է ներդրել ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղում: Դրանք են՝

(ա) երեք ժամկետային ավանդ՝ բացված 1973-1974 թվականներին, որոնց մնացորդը 1993թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում էր 19,795.30 ռուբլի, երեք 40% փոխհատուցման հաշիվներ՝ բացված 1991թ.-ին, որոնց մնացորդը 1993թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում էր 8,264 ռուբլի, երեք ցպահանջ հաշիվներ՝ բացված 1971, 1977 և 1988թթ.-ին դիմումատուի թոռնուհու անունով, որոնց մնացորդը 1993թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ կազմում էր 29,384.81 ռուբլի:

(բ) 23 1982թ. պետական ներքին շահող փոխառության պարտատոմսեր՝ յուրաքանչյուրը 50 ռուբլի արժողությամբ.

(գ) չորս 1990թ. պետական նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսեր, որոնցից մեկը՝ 2,500 ռուբլի արժողությամբ, որը դիմումատուին իրավունք էր տալիս ստանալ տեսաձայնարկիչ, մյուսը՝ 1,000 ռուբլի արժողությամբ, որը դիմումատուին իրավունք էր տալիս ստանալ հեռուստացույց, և երկուսը՝ 200 ռուբլի արժողությամբ, որը դիմումատուին իրավունք է տալիս ստանալ երկու կարի մեքենա.

(դ) ԽՍՀՄ Խնայբանկի 11 սերտիֆիկատ, որոնք ձեռք են բերվել 1990 թվականին՝ յուրաքանչյուրը 1,000 ռուբլի արժողությամբ:

6. 1993 թվականի հուլիսի 5-ին Կառավարության որոշմամբ ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղը վերակազմավորվեց Հայաստանի Հանրապետության Պետական մասնագիտացված խնայողական բանկի (այսուհետ՝ Խնայբանկ): Ավելի ուշ՝ նույն ամսվա մեջ, խորհրդային ռուբլին հանվեց շրջանառությունից:

7. 1993 թվականի նոյեմբերի 22-ին շրջանառության մեջ է մտել ազգային արժույթը՝ ՀՀ դրամը՝ 200 ռուբլին 1 դրամփոխարժեքով:

8. 2002 թվականի ապրիլի 26-ին Հայաստանի նկատմամբ ուժի մեջ է մտել Կոնվենցիան և դրան կից Թիվ 1 Արձանագրությունը:

9. 2004 թվականի հունիսի 21-ին դիմումատուն դիմել է Խնայբանկ՝ իր ավանդները հետ ստանալու պահանջով:

10. 2004 թվականի հուլիսի 21-ի նամակով Խնայբանկը դիմումատուին տեղեկացրել է հետևյալի մասին՝

«... Հայխնայբանկում մինչև 1993թ հունվարի 1-ը նախկին ԽՍՀՄ ռուբլով ներդրված ավանդների փոխհատուցման հարցը ներկայումս գտնվում է ՀՀ Ազգային Ժողովի և Կառավարության ուշադրության կենտրոնում: Այդ է վկայում նաև ՀՀ Կառավարության 2001թ սեպտեմբերի 8-ի թիվ 835 որոշումը, որում մասնավորապես նշված է, որ «... մինչև 1993թ. դրամափոխանակությունը քաղաքացիների կողմից «Հայխնայբանկ» ՓԲԸ ներդրված նախկին ԽՍՀՄ ռուբլով ավանդների հետագա հնարավոր ինդեքսավորման պարտավորությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը»:

Ինչ վերաբերում է նախկին ԽՍՀՄ 1982թ. պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի և սերտիֆիկատների վերաբերյալ Ձեր հարցմանը, ապա տեղյակ ենք պահում, որ ՀՀ Գերագույն Խորհուրդի 1993թ. հունիսի 10-ի որոշմամբ դադարեցվել է դրանցով կատարվող գործառնությունները, մինչև ԱՊՀ մասնակից պետությունների կողմից վճարման մասին վերջնական որոշում ընդունելը: Սակայն այդ որոշումից հետո հետագայում որևէ որոշում կամ կարգադրություն չեն կայացվել:

Իսկ 1990թ. ՀՀ բնակչությանը տրված նախկին ԽՍՀՄ նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերի մարումը, որը նախատեսվում էր սկսած 1993թ իրացնել տնտեսական և կանցադային ապրանքներով, ՀՀ Կառավարության 1992թ. հունիսի 29 թիվ 377 որոշումով համարվեց անիրագործելի:

Փոխհատուցման նպատակով ՀՀ Կառավարությունը 1993թ. հուլիսի 5-ի թիվ 345 որոշումով սահմանեց նշված պարտատոմսերի անվանական արժեքը ինդեքսավորել 300%-ով և մինչև 1993թ. օգոստոսի 1-ը բացել ավանդային հաշիվ կամ կատարել վճարումներ, որը նշված ժամանակահատվածում Ձեր կողմից չի իրականացվել:

Ինչպես նկատում եք Հայխնայբանկը վերը նշված հանգամանքների բերումով ավանդների և արժեթղթերի վճարումների նկատմամբ պարտավորություններ չունի:

ՀՀ Կառավարության կողմից ավանդների և հշված արժեթղթերի փոխհատուցման հնարավոր տարբերակների ընտրության և վճարների վերաբերյալ որոշում կայացնելուց հետո միայն Հայխնայբանկը կապահովի քաղաքացիների սպասարկումը»:

11. 2004 թվականի օգոստոսի 4-ին դիմումատուն Կառավարության դեմ հայց է ներկայացրել Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան՝ պահանջելով վերադարձնել Հայխնայբանկում ներդրված իր ավանդները և արժեթղթերը: Նա, մասնավորապես, պահանջել է, որ իր խնայողություններն իրեն վերադարձվեն բանկում ներդրած պահին եղած արժույթով:

12. 2004 թվականի օգոստոսի 6-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանը մերժել է դիմումատուի հայցը հետևյալ պատճառաբանությամբ՝

«...վեճը դատարանի քննությանը ենթակաչէ, քանի որ ՀՀ Ազգային ժողովը և ՀՀԿառավարությունը դեռևս չեն ընդունել համապատասխան օրենքներ և որոշումներ՝ ՀՀ քաղաքացիների կողմից Հայխնայբանկերում ներդրած ավանդները նրանց վերադարձնելու կարգի մասին»:

13. 2004 թվականի օգոստոսի 13-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել իրավունքի խախտման հիմքով՝ պնդելով, որ իր հայցը վարույթ ընդունելու վերաբերյալ մերժումը հիմնավորված չէ, և խնդրել է բեկանել առաջին ատյանի դատարանի որոշումը:

14. 2004 թվականի օգոստոսի 27-ին ՀՀ վճռաբեկ դատարանը որոշել է թողնել վճռաբեկ բողոքն առանց բավարարման: Վճռաբեկ դատարանը, վկայակոչելով դիմումատուի հայցադիմումի մերժման հիմքերը, գտել է, որ առաջին ատյանի դատարանի որոշումը պետք է թողնել անփոփոխ:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ավանդների վերականգնման հարցերին վերաբերող ներպետական դրույթներ

1. Հանրապետության բնակչության կողմից 1990 թվականին զնված պետական նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերի հետզնման մասին ՀՀ կառավարության 1992 թվականի հունիսի 29-ի թիվ 377 որոշում

15. Սույն որոշմամբ Կառավարությունը որոշել է ապրանքներ չլինելու պատճառով այս պարտատոմսերի մարման անիրագործելիության կապակցությամբ բնակչությունից հետզնված նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերը ձևակերպել որպես անվանական արժեքով ավանդներ:

2. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի 1993 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության պետական մասնագիտացված խնայողական բանկի մասին» որոշում

16. 1-ին հոդվածի համաձայն՝ Կառավարությանը իրավունք է վերապահվել ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղը

վերակազմավորել Հայաստանի պետական մասնագիտացված խնայողական բանկի:

17. 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը երաշխավորել է Հայխնայբանկում ներդրված ավանդների և այլ արժեքավոր իրերի պահպանությունն ու հետվճարումը:

18. 3-րդ հոդվածի համաձայն՝ Կառավարությունից պահանջվել է մեկ ամսվա ընթացքում առաջարկներ ներկայացնել ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղում կատարված խնայողությունների և այլ արժեքների ինդեքսավորման վերաբերյալ:

19. 4-րդ հոդվածի համաձայն՝ 1982 թվականի պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերի և ԽՍՀՄ Խնայբանկի սերտիֆիկատների առումով բոլոր գործարքները պետք է կասեցվեին մինչև Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների կողմից վերջնական որոշում ընդունելը:

3. ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղը Հայաստանի պետական մասնագիտացված խնայողական բանկի վերակազմավորելու մասին ՀՀ կառավարության 1993 թվականի հուլիսի 5-ի թիվ 345 որոշում

20. 1-ին կետի համաձայն՝ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղը վերակազմավորվել է Հայաստանի պետական մասնագիտացված խնայողական բանկի: Հայխնայբանկը նախկին ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղի իրավահաջորդն էր:

21. 2-րդ կետի համաձայն՝ Կառավարությունը երաշխավորել է Հայխնայբանկում ներդրված ավանդների և այլ արժեքավոր իրերի պահպանությունն ու հետվճարումը:

22. 4-րդ կետի համաձայն՝ ինդեքսավորվել են խնայողությունների հետևյալ տեսակները՝ ա) Խնայբանկի ավանդային հաշիվներում 1993թ. հունվարի 1-ի դրությամբ եղած մնացորդը՝ 100%, (բ) Խնայբանկի ավանդային հատուկ հաշիվներում 1993թ. հունվարի 1-ի դրությամբ եղած մնացորդը՝ 100%, (գ) 1990թ. նախկին ԽՍՀՄ նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերի անվանական արժեքը՝ 300%, և

(դ) բնակչության մոտ գտնվող գանձապետական պարտավորությունները՝ 200%:

4. *«Հայխնայքանկ ՓԲԸ-ի մասնավորեցման մասին» ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 835 որոշում*

23. Սույն որոշման համաձայն՝ Հայխնայքանկը վաճառվել է երկու մասնավոր ընկերությունների: ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը հանձնարարվել էր մասնավորեցման մասին պայմանագիր կնքել գնորդների հետ՝ դրանում նախատեսելով Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխավորությունները: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետությունը պետք է պատասխանատվություն ստանձներ՝ նախկին ԽՍՀՄ ռուբլով մինչև 1993 թվականի արժույթի փոխարկումը Խնայքանկ ՓԲԸ-ում քաղաքացիների կողմից ներդրված ավանդների հետագա հնարավոր ինդեքսավորման համար:

5. *«2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք (ուժի մեջ է մտել 2006 թվականի հունվարի 1-ից)*

24. 10-րդ բաժնով հաստատվել է 2006 թվականի տարեկան ծրագիրը մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ԽՍՀՄ Խնայքանկի հայկական մասնաճյուղում ներդրված դրամական ավանդների փոխհատուցման մասին, որը կցվել է այդ օրենքին՝ որպես հավելված:

25. 13-րդ հոդվածով սահմանվել է, որ մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ԽՍՀՄ Խնայքանկի հայկական մասնաճյուղում ներդրված դրամական ավանդների փոխհատուցման միջոցառումները պետք է կազմակերպվեն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Նշված ավանդների դիմաց փոխհատուցումը պետք է իրականացվեր Կառավարության կողմից հաստատված պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիման վրա այդ նպատակի համար նախատեսված բյուջետային հատկացումների շրջանակներում՝ որպես առանձին բյուջեի տող յուրաքանչյուր տարվա պետական բյուջեում: 2006 թվականի վերոհիշյալ տարեկան ծրագրի հիման վրա,

Կառավարությունը պետք է մշակեր այդպիսի փոխհատուցման ընթացակարգ և սահմաններ այն անձանց ցանկը, որոնք առաջնահերթության իրավունք ունեն նման փոխհատուցում ստանալու հարցում:

6. «Մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ԽՍՀՄ Խնայքանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցման ընթացակարգը հաստատելու մասին Կառավարության 2006 թվականի մարտի 16-ի թիվ 352-Ն որոշում

26. 1-ին հոդվածի համաձայն՝ այն ավանդատուները, որոնք 2005 թվականի հուլիսի 1-ից մինչև 2006 թվականի ապրիլի 1-ը շարունակաբար ընտանեկան նպաստ ստացած ընտանիքների անդամներ են, իրավունք ունեն փոխհատուցում ստանալ իրենց ավանդների դիմաց:

27. 5-րդ և 6-րդ հոդվածների համաձայն՝ 1-ին պարբերության մեջ նշված անձինք պետք է ներկայացնեին դիմում փոխհատուցում ստանալու համար: Դիմումները պետք է ներկայացվեին մինչև ապրիլի 12-ը: Դիմումների ընդունման ժամկետը լրանում էր 2006թ. մայիսի 12-ին:

28. 27-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունից փոխհատուցում պահանջելու՝ ավանդատուի իրավունքը ծագում է այն բյուջետային տարում ա) որի համար սույն ընթացակարգով սահմանված փոխհատուցում վճարելու նպատակով ծախսային ծրագիր է սահմանված «Պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և բ) տվյալ ավանդատուն ընդգրկված է տվյալ տարվա վճարման ժամանակացույցում:

Բ. Դատարանի մատչելիության իրավունքին վերաբերող ներպետական դրույթները

Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը

29. 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի համաձայն՝ դատավորը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե, *inter alia*, վեճը ենթակա չէ դատարանում քննության: Հայցի ընդունումը

մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վճարեկ դատարան՝ այն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

30. 228-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, որը գործել է խնդրո առարկա ժամանակահատվածում՝ դատական ակտը կարող է վերանայվել նոր երևան եկած հանգամանքների հիմքով, որոնք էական նշանակություն ունեն գործի համար, և որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել գործին մասնակցող անձանց:

31. 239-րդ հոդվածի համաձայն որը գործել է խնդրո առարկա ժամանակահատվածում՝ Վճարեկ դատարանի որոշումը ուժի մեջ է մտնում այն հրապարակելու պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ի. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

32. Դիմումատուն բողոքել է, որ զրկված է եղել դատարանի մատչելիության իրավունքից, ինչը հանդիսանում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում, որի համապատասխան դրույթը սահմանում է.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... դատարանի կողմից... արդարացի... դատաքննության իրավունք»:

Ա. Ընդունելիություն

1. Իրավական պաշտպանության ներպետական միջոցների սպառում

33. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները: Իսկապես, 2004 թվականին նա զրկված է եղել դատարանի մատչելիության իրավունքից, որովհետև խնդրո առարկա ժամանակահատվածում առկա չեն եղել վիճարկվող հարցերը կարգավորող համապատասխան իրավական ակտեր: Այնուամենայնիվ, 2006 թվականի մարտի 16-ին Կառավարությունը ընդունել է թիվ 352 որոշումը, որով սահմանվել է ավանդների փոխհատուցման ընթացակարգ: Այն ուժի մեջ է

մտել 2006 թվականի ապրիլին 6-ին: Այսպես, այդ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դիմումատուն նոր երևան եկած հանգամանքների հիմքով կարող էր հայց ներկայացնել դատարան իր գործը վերսկսելու համար՝ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասի:

34. Դիմումատուն պնդել է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի 2004 թվականի օգոստոսի 27-ի որոշումը վերջնական էր և ենթակա չէր բողոքարկման:

35. Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ներպետական իրավական պաշտպանության միջոցների սպառման վերաբերյալ կանոնի համաձայն՝ պետության դեմ բողոք ներկայացնող անձինք պարտավորվում են մինչև միջազգային դատական ատյան դիմելը նախ սպառել ազգային իրավական համակարգով նախատեսված իրավական պաշտպանության միջոցները՝ դրանով իսկ զերծ պահելով պետությանը միջազգային ատյանի առջև այնպիսի գործողությունների համար պատասխանատվությունից, որոնք նա հնարավորություն չի ունեցել լուծելու իր սեփական իրավական համակարգի միջոցով: Այս կանոնը պահպանելու համար դիմումատուն պետք է պատշաճ կերպով օգտվի իրավական պաշտպանության միջոցներից, որոնք առկա են և բավարար՝ ենթադրյալ խախտումների առնչությամբ փոխհատուցում ստանալու համար (տե՛ս *Assenov and Others v. Bulgaria*, 1998 թվականի հոկտեմբերի 28, պարբ. 85, *Վճիռների և որոշումների Ձեկույց* 1998-VIII):

36. Այնուհետև, 35-րդ հոդվածի համաձայն՝ առկա և բավարար միջոցների գոյությունը պետք է լինի բավարարաչափ որոշակի ոչ միայն տեսականորեն, այլ նաև՝ գործնականում, այլապես դրանք չեն լինի արդյունավետ և մատչելի (տե՛ս, օրինակ, *De Jong, Baljet and Van den Brink v. the Netherlands*, 1984 թվականի մայիսի 22-ի վճիռ, պարբ. 39, Սերիա Ա, թիվ 77, *Vernillo v. France*, 1991 թվականի փետրվարի 20-ի վճիռ, պարբ. 27, Սերիա Ա, թիվ 198): Կառավարության պարտավորությունն է իրավական պաշտպանության ներպետական միջոցների չսպառումը վիճարկելիս ապացուցել, որ այդ միջոցը եղել է արդյունավետ, տվյալ ժամանակահատվածում եղել է մատչելի գործնականում և տեսականորեն, այսինքն՝ հանդիսացել է այնպիսի միջոց, որն ի գործու է եղել դիմումատուի բողոքների կապակցությամբ

ապահովելու իրավական պաշտպանություն և առաջարկել է հաջողության հասնելու ողջամիտ իրատեսական հնարավորություն (տես, *Akdivar and Others v. Turkey*, 1996 թվականի սեպտեմբերի 16-ի վճիռ, պարբ. 68, Վճիռների և Որոշումների Ձեկույց 1996-IV):

37. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ 2004 թվականի օգոստոսի 6-ին Կենտրոն և Նորք Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի կողմից դիմումատուի բողոքը վարույթ չի ընդունվել այն պատճառաբանությամբ, որ այն ենթակա չէ դատական քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխան ընթացակարգերի բացակայության պատճառով: Վերոհիշյալ 91-րդ հոդվածի համաձայն՝ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը կարող էր բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան: Դիմումատուն օգտվել է այդ հնարավորությունից և վճռաբեկ բողոք է ներկայացրել, որը մերժվել է 2004 թվականի օգոստոսի 27-ին: Այս որոշումը վերջնական էր և ենթակա չէր բողոքարկման: Այսպիսով, դիմումատուն օգտվել է իրավական պաշտպանության բոլոր հնարավոր միջոցներից, որոնք հասանելի էին իրեն տվյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության դատավարական ընթացակարգի շրջանակներում:

38. Ինչ վերաբերում է Կառավարության այն պնդմանը, որ դիմումատուն պետք է փորձեր իր գործի քննությունը վերսկսել Կառավարության թիվ 352-Ն որոշումն ընդունելուց հետո, որով սահմանվում էին փոխհատուցման ընթացակարգեր, Դատարանը առաջին հերթին վկայակոչում է իր բազմաթիվ նախադեպերն այն իմաստով, որ գործի վերաբացման իրավունքի իրականացումը, կամ այլ ոչ սովորական միջոցների օգտագործումը, որպես կանոն, չի կարող վկայակոչվել Կոնվենցիայի 35 հոդվածի 1-ին կետի կիրառման համար (տե՛ս, ի թիվս այլոց, *R. v. Denmark*, թիվ 10326/83, Հանձնաժողովի 1983 թվականի սեպտեմբերի 6-ի որոշում, Որոշումներ և Ձեկույցներ 35, էջ 218; *Prystavska v. Ukraine* (dec.), թիվ 21287/02, 2002 թվականի դեկտեմբերի 17; և *Denisov v. Russia* (dec.), թիվ 33408/03, 2004 թվականի մայիսի 6): Դատարանի կարծիքով այս գործում առկա չէ նաև որևէ առանձնահատուկ իրավիճակ, որը կստիպեր դիմումատուին կիրառել այդ ոչ սովորական միջոցը: Մասնավորապես, ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում էր հայցով նորից դիմելու հնարավորություն նոր երևան եկած հանգամանքների դեպքում: Այս նորմը կիրառվում էր այն դեպքում, երբ խնդրո առարկա ժամանակահատվածում առկա էին հանգամանքներ, որոնք հայտնի չէին կողմերին: Դատարանը նշում է, որ դիմումատուի գործը քննվել է 2004 թվականի օգոստոսին, մինչդեռ Կառավարության վերոնշյալ որոշումը ընդունվել է 2006 թվականի մարտի 16-ին: Ուստի, տվյալ որոշումը չէր կարող համարվել «նոր երևան եկած հանգամանք» վերոնշյալ 228-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով, և գործը Կառավարության առաջարկած հիմքով վերաքննարկելու ցանկացած փորձ կձախողվեր: Հետևաբար, իրավական պաշտպանության միջոցները չսպառելու մասին Կառավարության առարկությունը պետք է մերժվի:

2. Եզրակացություն

39. Դատարանը եզրահանգում է, որ գանգատն ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով: Դատարանն այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Հետևաբար, այն պետք է ճանաչվի ընդունելի:

Բ. Գործի ըստ էության քննություն

1. Կողմերի փաստարկները

40. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուին դատարանի մատչելիության իրավունքից զրկելը համապատասխանում է 6-րդ հոդվածի պահանջներին: Մասնավորապես, դիմումատուն դիմել է համապատասխան դատարաններ 2004 թվականի օգոստոսի 4-ին, այսինքն՝ այն ժամանակ, երբ Կառավարությունն արդեն զբաղվում էր խնայբանկում ներդրված ավանդների վերականգնման հնարավորությունների ուսումնասիրությամբ և մշակում էր Կառավարության վերը նշված թիվ 352-Ն որոշումը: Ավելին, 2003թ. սեպտեմբերի 10-ին ՀՀ ազգային ժողովն որոշեց իր կազմում ստեղծել ժամանակավոր հանձնաժողով, որին նույնպես հանձնարարված էր զբաղվել այդ հարցով: Արդյունքում ընդունվել է «2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ

օրենքը, որն ուժի մեջ էր մտել 2006 թվականի հունվարի 1-ից, իսկ 2006 թվականի ապրիլի 6-ին ընդունվել է Կառավարության թիվ 352-Ն որոշումը, որով սահմանվում էին ավանդատուներին փոխհատուցում տրամադրելու կարգն ու պայմանները: Այս ամբողջ գործընթացը հրապարակային էր, և յուրաքանչյուր ոք հնարավորություն ուներ տեղեկացված լինելու Կառավարության և Ազգային ժողովի կողմից իրականացվող համատեղ միջոցառումների մասին: Հետևաբար, այնպիսի հանգամանքներում, երբ դեռևս մշակման փուլում էր հարցի ընդհանուր լուծումը, մեկ անձի կողմից ներկայացված հայցի քննությունը դատարանների կողմից՝ կարող էր բացասական ազդեցություն ունենալ ամբողջ գործընթացի վրա: Մասնավորապես, բոլոր այն անձինք, ովքեր խնայբանկում ունեին ավանդներ, և որոնց թիվը գերազանցում էր 400 000-ը, կսկսեին նման հայցեր ներկայացնել դատարաններ: Հետևաբար, դատարանները մերժում էին վարույթ ընդունել այդպիսի հայցեր և իրականացնել դրանց ըստ էության քննություն, մինչև ավանդների վերականգնման համար համապատասխան իրավական հիմք ստեղծվեր 2006 թվականի ապրիլին:

41. Դիմումատուն պնդել է, որ զրկված է եղել դատարանի մատչելիության իրավունքից, որը հանգեցրել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքների խախտմանը: Դատարանները գործը չեն ընդունել վարույթ և չեն իրականացրել իր գործի ըստ էության քննություն՝ չնայած այն փաստին, որ իր կողմից ներկայացրած՝ ավանդների վերականգնման և վնասների փոխհատուցման մասին հայցն ուներ քաղաքացիական բնույթ և ենթակա էր դատարանների կողմից քննության:

2. Դատարանի գնահատականը

42. Դատարանը կրկնում է, որ «դատարանի իրավունքը», որի միայն մի բաղադրիչն է կազմում դատարանի մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է պետության կողմից կարգավորման եղանակով ենթարկվել սահմանափակումների: Այդ առումով պետությանը վերապահված է հայեցողության որոշակի սահման: Այնուամենայնիվ, կիրառվող այդ շրջանակը չպետք է սահմանափակի անձի՝ դատարանի մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խաթարվի այդ իրավունքի

էությունը: Ավելին, ցանկացած սահմանափակում չի համապատասխանի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե ձեռնարկվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջև առկա չէ ողջամիտ համամասնություն (տե՛ս ի թիվս այլոց, *Tolstoy Miloslavsky v. the United Kingdom*, 1995 թվականի հուլիսի 13, պարբ. 59, Սերիա Ա թիվ 316-Բ, *Khalfaoui v. France*, թիվ 34791/97, պարբ. 35, ՄԻԵԴ 1999-IX, և *Papon v. France*, թիվ 54210/00, պարբ. 90, ՄԻԵԴ 2002-VII):

43. Սույն գործում Խնայքանկում ներդրված խնայողական ավանդների վերադարձման վերաբերյալ դիմումատուի հայցադիմումը քննության չի առնվել ներպետական դատարանների կողմից այն պատճառաբանությամբ, որ Ազգային Ժողովի և Կառավարության կողմից դեռևս այդ հարցի կարգավորման որևէ իրավական հիմք՝ օրենք կամ որոշում, նախատեսված չի եղել: Դատարանը համամիտ է Կառավարության այն դիրքորոշման հետ, որ իրավունքի այս սահմանափակումը հետապնդել է իրավաչափ նպատակ: Այն նշում է, որ դիմումատուի հայցն առաջացել է խորհրդային ռուբլու անկման և այդ արժույթը շրջանառությունից ամբողջությամբ հանելու հետևանքով՝ առանց անհատների՝ խորհրդային ռուբլով խնայողական ավանդների խնդիրը լուծելու: Հայաստանը կանգնել էր իր սեփական դրամական համակարգը ձևավորելու հսկայաձավալ խնդրի և նախկին դրամական համակարգի փլուզման հետևանքով առաջացած խնդրի լուծման առջև: Իսկապես, մեկ անձի կողմից ներկայացված հայցի քննությունը՝ անկախ գործի ելքից, կարող էր ընդհանուր առմամբ բացասական ազդեցություն ունենալ ավանդների վերականգման ողջ գործընթացի վրա, քանի որ դա այնպիսի խնդիր էր, որի համար անհրաժեշտ էր ոչ թե անհատական, այլ համակարգված լուծում՝ հաշվի առնելով տուժած անձանց մեծ թվաքանակը: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմումատուի հայցի քննության մերժումը նշված հիմքերով հետապնդել է իրավաչափ նպատակ՝ մասնավորապես, ապահովել ավանդների վերականգնման գործընթացի սահուն և արդյունավետ իրականացումը:

44. Ինչ վերաբերում է այդ սահմանափակման համաչափությանը, Դատարանը նկատում է, որ դա միայն ժամանակավոր միջոց էր: Ներպետական դատարանները մերժել

են քննության առնել դիմողի հայցը մինչև պետության կողմից ավանդների վերականգնման համապատասխան ընթացակարգերի ընդունումը: Դատարանն այդ կապակցությամբ նշում է, որ խնայողական ավանդների վերականգնման հարցը տարիներ շարունակ եղել է իշխանությունների ուշադրության կենտրոնում, և աստիճանաբար քայլեր են ձեռնարկվել այդ խնդիրը լուծելու համար, ներառյալ՝ ամենախոցելի խմբերին պատկանող ավանդատուներին իրենց խնայողական ավանդների արժեզրկման համար փոխհատուցում պահանջելու հնարավորություն տվող կարգի ընդունումը 2006 թվականին (տե՛ս վերոնշյալ 26-28 պարբերությունները): Հաշվի առնելով վերը նշվածը՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի եղել անհամաչափ:

45. Հետևաբար, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

46. Դիմումատուն բողոքել է, որ չի կարողացել վերականգնել Խնայբանկում ներդրած իր խնայողությունները, այդ թվում՝ ավանդներն ու արժեթղթերը, և վկայակոչել է Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը, որի համաձայն՝

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի գրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով»:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար»:

Ընդունելիություն

1. Կողմերի փաստարկները

(ա) Կառավարությունը

47. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները, ինչպես նախատեսված է Կոնվենցիայի 35-րդ հոդվածով: Նախ, ներպետական դատարաններ ներկայացրած նրա հայցն ուղղված է ոչ թե Հայխնայբանկի, այլ Կառավարության դեմ: Մինչդեռ, ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղի իրավահաջորդը ոչ թե Կառավարությունն է, այլ Հայխնայբանկը, որն էլ կրում է դրանից բխող բոլոր պարտավորությունները: Երկրորդ, դիմումատուն Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի որոշումը վիճարկել է նյութական, այլ ոչ թե դատավարական իրավունքի խախտման հիմքով՝ այդպիսով չբարձրացնելով Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ներքո բերված գանգատներից որևէ մեկը ըստ էության քննելու հարց: Եվ վերջապես, դիմումատուի կողմից ընդհանուր իրավասության դատարան ներկայացված հայցի պահանջը ըստ էության տարբերվում է Դատարան ներկայացված գանգատում նշված պահանջից:

48. Կառավարությունն այնուհետև պնդել է, որ ավանդների վերադարձման պատասխանատվությունը կրում է ոչ թե պետությունը, այլ Խնայբանկը: 1996 թվականին Հայաստանի Հանրապետության Պետական մասնագիտացված խնայողական բանկը վերակազմավորվել է «Հայխնայբանկ» փակ բաժնետիրական ընկերության, որն էլ իր հերթին մասնավորեցվել է 2001 թվականին: Այսպիսով, 2001 թվականից սկսած՝ Հայխնայբանկը հանդես է գալիս որպես մասնավոր ընկերություն է, իսկ պետությունը պատասխանատվություն չի կրում մասնավոր անձանց հետ հարաբերությունների, այդ թվում՝ ավանդների վերադարձման նրա պարտավորության համար: Պետությունը պատասխանատվություն է ստանձնել միայն ավանդների հետագա հնարավոր ինդեքսավորման համար և հանդես է եկել որպես դրանց մարման երաշխավոր: Այդ նպատակով՝ 1993 թվականի հուլիս 5-ին Կառավարությունն ընդունել է թիվ 345 որոշումը, որով այն ինդեքսավորել է Խնայբանկում ավանդադրված տարբեր տեսակի խնայողությունները: Հետագայում՝ 1993 թվականի նոյեմբերին, Կառավարությունն իրականացրել է դրամական բարեփոխում, որի արդյունքում նախկին ԽՍՀՄ ռուբլու փոխարեն

շրջանառվել է հայկական դրամը՝ 200/1 փոխարժեքով, և դրանով ապահովվել է այդ ավանդների մարումը: Այսպիսով, յուրաքանչյուր ավանդատու՝ ներառյալ դիմումատուն, իրավունք ունի ցանկացած պահի ստանալու իր ավանդները վերը նշված փոխարժեքով: Ավելին, գիտակցելով ինդեքսացիայի արդյունքում ավանդատուների մեծ կորուստների հնարավորությունը՝ Կառավարությունը 2006 թվականի մարտի 16-ին ընդունել է թիվ 352-Ն որոշումը, որի համաձայն առաջնահերթության որոշակի կարգով սկսել է ավանդատուներին տրամադրել փոխհատուցումներ:

49. Կառավարությունը նաև պնդել է, որ խնդրի վերը նկարագրված լուծումն էականորեն չի տարբերվում այլ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների փորձից:

(բ) Դիմումատուն

50. Դիմումատուն պնդել է, որ սպառել է իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները: Նախևառաջ, Կառավարությունն իր 1993 թվականի հուլիս 5-ի թիվ 345 որոշմամբ երաշխավորել է Հայխնայբանկում ներդրված ավանդների և այլ արժեքների պահպանությունն ու վերականգնումը: Ավելին, Կառավարությունն իր՝ 2001 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 835 որոշմամբ ստանձնել է Հայխնայբանկում ներդրված ավանդների ինդեքսավորման պարտավորությունը: Ինչ վերաբերում է 1982 թվականի պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերին և Խնայբանկի սերտիֆիկատներին, ապա դրանց հետ կապված բոլոր գործառնությունները դադարեցվել են ՀՀ Գերագույն Խորհրդի 1993 թվականի հունիսի 10-ի որոշմամբ: Ինչ վերաբերում է 1990 թվականի նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերին, ապա դրանց մարումը իրական չի համարվել Կառավարության 1992 թվականի հունիսի 29-ի թիվ 377 որոշմամբ, և դրանց արժեքը Կառավարության 1993 թվականի հուլիսի 5-ի թիվ 345 որոշմամբ ինդեքսավորվել է 300 տոկոսով: Հաշվի առնելով վերոնշյալը՝ Հայխնայբանկը ավանդների ու արժեթղթերի վերադարձման որևէ պարտավորություն չունի, մինչդեռ Կառավարությունը կրում է նման պարտավորություններ և հանդիսանում է պատասխանող:

Ավելին, ավանդներն ու արժեթղթերը վերադարձնելու՝ Հայխնայբանկի իրավասությունը և իրավունակությունը սահմանափակվել են Կառավարության վերը նշված որոշումներով:

51. Երկրորդ, չկար անհրաժեշտություն ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացվող իր բողոքում առաջ քաշել նյութական իրավունքի խախտումներին վերաբերող փաստարկները, քանի որ իր հայցադիմումը չի քննվել ըստ էության:

52. Վերջապես, ներպետական դատարաններ ներկայացված իր հայցերն ամբողջովին արտացոլված են Դատարան ներկայացված իր գանգատում:

2. Դատարանի գնահատականը

53. Դատարանը գտնում է, որ չկա անհրաժեշտություն ամբողջությամբ քննության առնելու կողմերի ներկայացրած փաստարկները, քանի որ սույն գանգատն անընդունելի է հետևյալ պատճառաբանությամբ:

(ա) Դիմումատուի ավանդների առնչությամբ՝

54. Դատարանը նկատում է, որ դիմումատուի կողմից Խնայբանկում փաստացի ներդրված գումարները, անկախ նրանց իրական արժեքից, անկասկած հանդիսանում են «գույք»՝ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով (տե՛ս *Gayduk and Others v. Ukraine* (dec.), nos. 45526/99, 46099/99, 47088/99, 47176/99, 47177/99, 48018/99, 48043/99, 48071/99, 48580/99, 48624/99, 49426/99, 50354/99, 51934/99, 51938/99, 53423/99, 53424/99, 54120/00, 54124/00, 54136/00, 55542/00 and 56019/00, ՄԻԵԴ 2002-VI (քաղվածքներ)): Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ դիմումատուի ներկայացրած գանգատի հիմնական նպատակը այդ գումարների վերականգնման պահանջն է՝ դրանց գնողունակության պահպանմամբ: Նույնն ակնհայտ է դառնում ներպետական դատարաններ ներկայացրած նրա հայցից, որում նա խնդրել է իր ավանդները վերադարձնել խորհրդային ռուբլով՝ արժույթ, որն այլևս գոյություն չուներ, և դրանով փորձել է վերականգնել իր խնայողությունների սկզբնական արժեքը:

55. Այդ առնչությամբ Դատարանը նշում է, որ դիմումատուի խնայողություններն իրենց գնողունակությունը կորցրել են

խորհրդային ռուբլու կտրուկ արժեզրկման ու գնաճի հետևանքով: Այնուամենայնիվ, այն կրկնում է, որ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պետության վրա չի դրվում որևէ ընդհանուր պարտավորություն՝ պահպանել ֆինանսական հաստատություններ ավանդադրված գումարների գնողունակությունը խնայողությունների պարբերական ինդեքսավորման միջոցով (տե՛ս *Appolonov v. Russia* (dec.), թիվ 67578/01, 2002 թվականի օգոստոսի 29, և *Gayduk and Others*, նշված վերևում): Ինչ վերաբերում է 2001 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 835 որոշմամբ Կառավարության ստանձնած պատասխանատվությանը, ապա դա վերաբերում է ավանդների հետագա հնարավոր ինդեքսավորմանը և կախված է փոխհատուցման համապատասխան ընթացակարգեր ներդնելուց և այդ նպատակով արվող բյուջետային հատկացումների առկայությունից: Այդ պատճառով, ներկա պահին այն իրավունք չի վերապահում դիմումատուին ստանալ որոշակի գումար, հետևաբար, նրա կողմից հարուցված դատական վարույթները չեն տարածվում իրեն պատկանող «գույք»-ի վրա: Հաշվի առնելով վերը նշվածը՝ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը կիրառելի չէ սույն գործի շրջանակներում:

56. Հետևաբար, գանգատի սույն մասը *ratione materiae* անհիմն է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով և պետք է մերժվի 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

(բ) Դիմումատուի արժեթղթերի առնչությամբ՝

57. Դատարանն ի սկզբանե վերահաստատում է այն մոտեցումը, որ տնտեսական արժեք ունեցող արժեթղթերը կարող են համարվել «գույք» (տե՛ս *Jasinskij and Others v. Lithuania*, թիվ 38985/97, 1998 թվականի սեպտեմբերի 9-ի Հանձնաժողովի որոշում): Դիմումատուն, ձեռք բերելով 1982 թվականի պետական ներքին շահող փոխառության պարտատոմսեր և ԽՍՀՄ Խնայքանկի սերտիֆիկատներ, պարտատոմսերի նկատմամբ ստացել է Խորհրդային Կառավարության կողմից մայր գումարի, առանց խաղարկային դրամական շահումների, իսկ սերտիֆիկատների նկատմամբ՝ մայր գումարի և կուտակված տոկոսների հետվճարման իրավունք: Ինչ վերաբերում է 1990 թվականի պետական նպատակային անտոկոս փոխառության

պարտատոմսերին, ապա դրանք որոշակի դրամական արժեք ունենալու հետ մեկտեղ դիմումատուին իրավունք էին վերապահում ստանալ տարբեր կենցաղային ապրանքներ՝ առանց հավելավճարների: Դատարանը գտնում է, որ այդպիսի պարտատոմսերն ու սերտիֆիկատները կարող են ըստ էության համարվել գույք՝ առաջացնելով սեփականության իրավունք (տե՛ս նույն տեղում):

58. Այնուամենայնիվ, Դատարանը նշում է, որ Թիվ 1 Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ ուժի մեջ է մտել միայն 2002 թվականի ապրիլի 26-ին, և միջազգային իրավունքի ընդհանուր հանրաճանաչ նորմերին համապատասխան՝ դրա դրույթները պարտադիր չեն Հայաստանի համար այնպիսի գործողության կամ փաստի դեպքում, որը տեղի է ունեցել կամ այնպիսի իրավիճակի դեպքում, որը դադարել է գոյություն ունենալ մինչ այդ (տե՛ս ի թիվս այլոց, *Blečić v. Croatia* [ՄՊ], թիվ 59532/00, պարբ. 70, ՄԻԵԴ 2006-...):

59. Ինչ վերաբերում է 1982 թվականի պետական ներքին շահող փոխառության պարտատոմսերին և ԽՍՀՄ Խնայքանկի սերտիֆիկատներին, Դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհուրդն իր 1993 թվականի հունիսի 10-ի որոշմամբ, թեև երաշխավորել է Խնայքանկում ներդրված քաղաքացիների ավանդների և այլ արժեքավոր իրերի պահպանությունն ու հետվճարումը, այնուամենայնիվ, որոշել է դադարեցնել այդ արժեթղթերի հետ կապված բոլոր գործառնությունները (տե՛ս վերը նշված 19-րդ պարբերությունը): Ինչ վերաբերում է 1990 թվականի պետական նպատակային անտոկոս փոխառության պարտատոմսերին, ապա Դատարանը նշում է, որ դրանց փոխարկումը տնտեսական ու կենցաղային ապրանքներով Կառավարության 1992 թվականի հունիսի 29-ի թիվ 377 որոշմամբ համարվել է անիրագործելի (տե՛ս վերը նշված 15-րդ պարբերությունը): Ուստի, միջամտությունը դիմումատուի սեփականության նկատմամբ տեղի է ունեցել հենց այդ ժամանակ, մինչդեռ թիվ 1 Արձանագրությունը Հայաստանի Հանրապետության նկատմամբ ուժի մեջ է մտել շատ ավելի ուշ:

60. Հետևաբար, գանգատի սույն մասը *ratione temporis* անըղունելի է Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով և պետք է մերժվի 35-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ՝

1. Հայտարարում է ընդունելի դատարանի մատչելիության իրավունքի մերժման կապակցությամբ ներկայացված գանգառը, իսկ գանգառի մնացած մասն անընդունելի.
2. Վճռում է, որ տեղի չի ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

Կատարված է անգլերենով և գրավոր կերպով ծանուցվել է 2011 թվականի մարտի 22-ին՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Santiago Quesada
Քարտուղար

Josep Casadevall
Նախագահ

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և Դատարանի կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետի համաձայն՝ սույն վճռին կցվում է դատավոր Ziemele-ի հատուկ կարծիքը:

J.C.M.
S.Q.

ԴԱՏԱՎՈՐ ZIEMELE-ի ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Սույն գործի առնչությամբ ես լիովին համակարծիք եմ Պալատի դիրքորոշման հետ: Կցանկանայի տվյալ հիմնավորմանն ավելացնել ևս մի տեսակետ, որն իմ կարծիքով ունի հիմնարար կարևորություն, թեև պատասխանող պետությունը լիովին այն չի զարգացրել իր դիրքորոշման մեջ :

Գործը սկիզբ է առել պետության կողմից խիստ կենտրոնացված կառավարում ունեցող Խորհրդային Միության տնտեսության փլուզման համատեքստում: Հայաստանի Հանրապետությունը իրավահաջորդ պետություններից մեկն է: Դիմումատուն Խորհրդային ռուբլով մի քանի անգամ ավանդներ է ներդրել ԽՍՀՄ Խնայբանկի հայկական մասնաճյուղում՝ 1970–ական և 1980–ական թվականներին: Խորհրդային Միության փլուզումից և Հայաստանի Հանրապետության կազմավորումից հետո դիմումատուն նախկին ԽՍՀՄ–ի տարբեր ծայրամասերում գտնվող՝ նախկին Խորհրդային Միության բազմաթիվ այլ քաղաքացիների նման ցանկանում էր վերականգնել իր ավանդները: Խորհրդային ռուբլին շրջանառությունից հանվել էր 1993 թվականին Ռուսաստանի Դաշնության միակողմանի որոշմամբ: Դրա հետևանքով Հայաստանը պետք է ներմուծեր իր արժույթը և ձևավորեր իր սեփական դրամական համակարգը: Այսպիսով, անկախության առաջին տարիներին, արժույթի հնարավոր բացակայության մտավախությանն ավելացել էր այն իրականությունը, որ այդ արժույթն այլևս վճարման օրինական միջոց չէր:

Դա այն բազմաթիվ բնորոշ խնդիրներից մեկն էր, որն առաջանում է այն ժամանակ, երբ տեղի է ունենում պետության իրավահաջորդություն: Դատարանը պետք է անդրադառնար պետության իրավահաջորդությանը նախորդող և դրա հետ առնչվող խնդիրներին, որը, սակայն, տարբերվում է նախկին Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետության (ՀՄԴՀ) և Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետության փլուզման դեպքերից: Նման դեպքերում Դատարանը լայն հայեցողություն է տալիս իրավահաջորդ պետություններին պետության իրավահաջորդությանը բնորոշ խնդիրները լուծելու

համար: *Kovacic v. Slovenia* գործում, որը վերաբերում էր ՀՄԴՀ-ի փլուզմանը, դրա բանկային համակարգին և ՀՄԴՀ-ի իրավահաջորդ պետություններում հին արտարժույթով ներդրված խնայողությունների մասով պարտավորությունների վերաբաշխման հարցին, Մեծ Պալատը համաձայնել է Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի հետ այն հարցի շուրջ, որ «հազարավոր անհատների փոխհատուցելու հարցը պետք է լուծվի իրավահաջորդ պետությունների միջև ձեռք բերված համաձայնությամբ» (*Kovacic v. Slovenia*, թիվ 44574/98, 45133/98 և 48316/99, [ՄՊ], 2008 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռ, պարբ. 256):

Պետության իրավահաջորդության ոլորտի փորձագետները նախկին ԽՍՀՄ-ի վերաբերյալ դիտարկել են, որ «Տնտեսական և Միասնական Դրամական Համակարգի մասին» համաձայնագիրը ... ստորագրվել է [նախկին ԽՍՀՄ-ի] ութ հանրապետությունների (բացի Ուկրաինայից) միջև 1991թ. հոկտեմբերի 18-ին և բանակցությունները շարունակվել են մինչև Մինսկի պայմանագիրը՝ դեկտեմբերին ստեղծելով Անկախ Պետությունների Համագործակցություն (ԱՊՀ), որի նպատակն էր ձևավորել դրամական միություն» (G. Burdeau, «Դրամը և Պետության իրավահաջորդությունը Արևմտյան Եվրոպայում», B. Stern (ed.), *Փլուզումը, Ընթացքը և Իրավահաջորդությունը Արևմտյան Եվրոպայում*, Kluwer Law International, 1998, էջ 48): Սկզբնական քաղաքական կամքը, սակայն, ուղեկցված չէր համապատասխան տնտեսական պայմաններով: Սկզբնական քաղաքական կամքը, սակայն, ուղեկցված չէր համապատասխան տնտեսական պայմաններով: Ըստ հետագա դիտարկումների՝ «1993թ. հուլիսի ռուսական դրամական բարեփոխումը, որը հանգեցրեց շրջանառությունից մեծ քանակությամբ ռուբլիները դուրս հանելուն առանց այլ իրավահաջորդ պետությունների (տե՛ս պարբ. 6-7) հետ համաձայնեցնելու, [...] արժանացավ քննադատության» Ռուսաստանի Դաշնությունում այդ ժամանակ: «Մյուս կողմից՝ միջազգային իրավունքի տեսանկյունից այլ հանրապետությունները բաց քննադատություն չեն իրականացրել» (ibid., էջ 53):

Ամեն դեպքում, ակնհայտ է, որ նոր պետությունները Խորհրդային այդչափ կենտրոնացված տնտեսությունից անջատվելուց հետո կանգնեցին մեծ դժվարությունների առջև:

Խորհրդային ֆինանսական միջոցները համամասնորեն չբաշխվեցին իրավահաջորդ պետությունների միջև: Դա թերևս առավել լուրջ խնդիր էր նախկին Խորհրդային համատեքստում, քանի որ ավանդները, դրամական պահուստները և այլ արժեքներ խիստ կենտրոնացված էին: Այդպիսի հանգամանքներում, Հայաստանի Հանրապետության լավագույն մտադրությունների դեպքում անգամ շատ դժվար կլիներ Դատարանի համար որոշել Կոնվենցիայի շրջանակներում, որ Հայաստանը կրում է պատասխանատվություն խորհրդային ռուբլով ներդրված ավանդների համար կամ պարտավոր է տրամադրել փոխհատուցում դրանց դիմաց: Դա, այնուամենայնիվ, չի նշանակում, որ համապատասխան պետությունները ձեռնարկել են միջազգային իրավունքին համապատասխան հնարավոր բոլոր միջոցները նշված հարցերը կարգավորելու համար: